Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու և գործը գրավոր ընթացակարգով քննելու մասին

26 հունիսի 2023թ. ք.Երևան
Քաղաքացիական գործ՝ ԵԴ2/7667/02/23

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Մ.Հովակիմյանս ծանոթանալով «Արսենալ ԼՏԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ստանիսլավ Բեկովի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Արսենալ ԼՏԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ստանիսլավ Բեկովը 2023թ. հունիսի 26-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության զորքերի հրամանատարի՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու մասին 2023թ. մայիսի 4-ի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Կազմված արձանագրության հիման վրա հայցվորը «Արսենալ ԼՏԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ստանիսլավ Բեկովը 2023թ. հունիսի 7-ին դատարան է ներկայացրել պետական տուրքի վճարման անդորրագրի բնօրինակը, որը դատավորի աշխատակազմին է հանձնվել 2023թ. հունիսի 15-ին

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ գտնում եմ, որ այն ենթակա է ընդունման վարույթ:

Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին, գտնում եմ, որ անհրաժեշտ է պատասխանողից պահանջել թիվ ՀՀ ՈՉ ՄԱԱՊՁԲ-2022-ՀՄ/ՀԳ-1 ընթացակարգի ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործին մասնակցող անձը չի միջնորդել գործը քննել դատական նիստում՝ գտնում եմ, որ անհրաժեշտ է տվյալ քաղաքացիական գործը քննել գրավոր ընթացակարգով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 125-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 234.6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Արսենալ ԼՏԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության՝ ՀՀ ներքին գործերի

նախարարության ոստիկանության զորքերի հրամանատարի՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու մասին 2023թ. մայիսի 4-ի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին ընդունել վարույթ և գործը քննել գրավոր ընթացակարգով:

Պատասխանող ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանությանը՝ սույն որոշումը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում դատարան ներկայացնել թիվ ՀՀ ՈՁ ՄԱԱՊՁԲ-2022-ՀՄ/ՀԳ-1 ընթացակարգի ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023թ. օգոստոսի 7-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով (www.datalex.am):

Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Մ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ